ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-12)

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ներքին աուդիտի կանոնակարգի նախագծի, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի մշակման, ինչպես նաև վերանայման աշխատանքներին: Մասնակցում է ներքին աուդիտին և աուդիտի ընթացքում բացահայտված կեղծիքի նշանների, աուդիտի սահմանափակումների վերաբերյալ անմիջապես տեղեկացնում է Բաժնի պետին: Իր կողմից իրականացված յուրաքանչյուր աուդիտի ավարտից հետո կազմում է հաշվետվություն և ներկայացնում Բաժնի պետին: Մասնակցում է ներքին աուդիտի իրականացման համար առանձին մեթոդաբանության և այլ վերլուծական աշխատանքների մշակման, ինչպես նաև վերանայման գործընթացներին և նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝ տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,

Մրցույթը կկայանա 13.11.2015 թ. ժամը 11:00-ին մարզպետարանի շենքում (Ք.Եղեգնաձոր,Շահումյան 5):

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.2-23)

Մասնակցում է ՀՀ Վայոց ձորի մարզի(այսուհետ՝ Մարզ) ուսումնական հաստատությունների գործունեության հետ կապված աշխատանքներին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգի համաձայն:

Իրականացնում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, Մարզի դպրոցական տարիքի երեխաների հաշվառման և նրանց ուսումնական հաստատություններում տեղաբաշխման աշխատանքները.

Իրականացնում է հիմնական և միջնակարգ կրթության մասին վկայականների, ատեստատների և դիպլոմների ստացման և բաշխման աշխատանքները, ինչպես նաև իրականացնում է Հանրապետական օլիմպիադայի դպրոցական, տարածքային և մարզային փուլերի անցկացումը.
Իրականացնում է Մարզի ուսումնական հաստատություններում «Ռազմագիտություն.» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրության դաստիարակության կազմակերպման աշխատանքները.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝ հումանիտար-սոցիալական կամ կրթություն կամ բնագիտական մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն,

Մրցույթը կկայանա 13.11.2015 թ. ժամը 15:00-ին, մարզպետարանի շենքում (Ք.Եղեգնաձոր,Շահումյան 5):

3. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.2-24)

Մասնակցում է ՀՀ Վայոց ձորի մարզի /այսուհետ՝ Մարզ/ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների ագրարային ոլորտի տնտեսավարող այլ սուբյեկտների արտադրության կազմակերպման և զարգացման գործընթացին: Մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքներին: Մասնակցում է գյուղատնտեսական,. բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակման աշխատանքներին, բնական աղետների հետևանքների ուսումնասիրության, աղետի պատճառած վնասի չափի որոշման աշխատանքներին.

Մասնակցում է Մարզի տարածքում անասնաբուժական ծառայությունների , հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքներին: Կենդանիների կարանտինային հիվանդությունների բռնկման դեպքում վարչատարածքային անասնաբուժական ծառայության մարմինների ներկայացմամբ, սահմանված կարգով, համապատասխան տարածքում՝ Մարզում, համայնքում, բնակավայրում մասնակցում է կարանտինի սահմանման և չեղյալ համարման աշխատանքներին.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝ `գյուղական և ձկնային տնտեսություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն,

Մրցույթը կկայանա 13.11.2015 թ. ժամը 13:00-ին, մարզպետարանի շենքում (Ք.Եղեգնաձոր,Շահումյան 5):

1-3 կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների , մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- Սույն պաշտոնների անձնագրերի <<Գիտելիքներ և հմտություններ>> բաժնի <<բ>> ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Վայոց ձորի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը
*դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
*տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետկամ տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
*արական սեռի անձինք ՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
*մեկ լուսանկար՝ 3x4 չափսի
*անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր
ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2015թ հոկտեմբերի 7-ը:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան / հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5, հեռ 2-22-52, 2-55-95/: